



**Կառուցելով  
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC  
1 Northern Ave., office 27  
Yerevan, 0001, Armenia  
Tel: +374 (10) 500 790  
+374 (10) 500 705  
Fax: +374 (10) 500 706  
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0001  
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27  
Հեռ. +374 (10) 500 790  
+374 (10) 500 705  
Ֆաքս. +374 (10) 500 706

## Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Մոբի-Դրամ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետիրոջը և Խորհրդին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «Մոբի-Դրամ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն»)՝ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2016թ. հունիսի 20-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն, որը ներառում է այլ հանգամանքներ լուսաբանող պարագրաֆ այն մասին, որ Ընկերության 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտին իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով, հետևաբար ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության՝ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

### *Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Օանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան:

### *Եզրակացություն*

Մեր կարծիքով, 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Ընկերության՝ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին՝ Օանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր

Գլխավոր տնօրեն՝ Ն. Սարգսյան՝  
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի  
(գործող 31.07.13թ. տրված լիազորագրի հիման վրա)



Էրիկ Հայրապետյան

20 հունիսի, 2016թ.

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն**

**2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	<u>2015թ.</u>	<u>2014թ.</u>
<b>Հասույթ, այդ թվում.</b>		
Կոմունալ վճարումներ	55,466	48,587
Արտաքին վճարումներ	8,412	8,271
Վարկի մարումներ	7,002	6,555
Միջազգային դրամական փոխանցումներ	1,750	1,547
Էլեկտրոնային փողեր	1,823	323
Այլ	1,090	671
<b>Ընդամենը</b>	<u>75,543</u>	<u>65,954</u>
<b>Գործառնական ծախսեր, այդ թվում.</b>		
Աշխատավարձի գծով ծախսեր	(65,685)	(65,749)
Մաշվածություն և անորտիզացիա	(37,597)	(34,047)
Ծրագրի սպասարկման ծախսեր	(22,314)	(21,678)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(4,680)	(3,437)
Այլ գործառնական ծախսեր	(35,141)	(26,605)
<b>Ընդամենը գործառնական ծախսեր</b>	<u>(165,417)</u>	<u>(151,516)</u>
<b>Գործառնական գործունեությունից վնաս</b>	<u>(89,874)</u>	<u>(85,562)</u>
<b>Զուտ ֆինանսական եկամուտ</b>	7,217	7,364
Ֆինանսական ծախսեր	(12,662)	(17,726)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ վնաս	(8,678)	(30,755)
<b>Վնաս մինչև շահութահարկ</b>	<u>(103,997)</u>	<u>(126,679)</u>
<b>Շահութահարկի գծով փոխհատուցում</b>	15,119	12,117
<b>Հաշվետու տարվա վնաս</b>	<u>(88,878)</u>	<u>(114,562)</u>
Այլ համապարփակ եկամուտ	-	-
<b>Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս</b>	<u>(88,878)</u>	<u>(114,562)</u>

Ստորագրվել և հավանության են արժանացել տպագրության Տնօրենների Խորհրդի կողմից:

Գործադիր տնօրեն՝



Մովսեսյան

Գլխավոր հաշվապահ՝

Սուսաննա Զարգարյան

20 հունիսի, 2016թ.

**Ֆինանսական վիճակի մասին ամիոփ հաշվետվություն****2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
<b>Ակտիվներ</b>		
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		
Պաշարներ	2,241	2,303
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	31,958	5,718
Ընթացիկ հարկային ակտիվներ	308	308
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	343,007	383,795
	<u>377,514</u>	<u>392,124</u>
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		
Հիմնական միջոցներ	33,482	48,515
Ոչ նյութական ակտիվներ	166,375	177,228
Հետաձգված հարկային ակտիվներ	57,395	42,276
	<u>257,252</u>	<u>268,019</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<u>634,766</u>	<u>660,143</u>
<b>Կապիտալ և պարտավորություններ</b>		
<b>Կապիտալ</b>		
Բաժնետիրական կապիտալ	613,000	613,000
Լրացուցիչ կապիտալ	49,534	49,534
Կուտակված վնաս	(379,454)	(290,576)
<b>Ընդամենը կապիտալ</b>	<u>283,080</u>	<u>371,958</u>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	101,087	53,874
	<u>101,087</u>	<u>53,874</u>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Փոխառություններ	250,599	234,311
	<u>250,599</u>	<u>234,311</u>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<u>351,686</u>	<u>288,185</u>
<b>Ընդամենը կապիտալ և պարտավորություններ</b>	<u>634,766</u>	<u>660,143</u>

## Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2015 թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից Հաշվետու տարվա վնաս	(103,997)	(126,679)
<b>Ճշգրտումներ</b>		
Մաշվածություն և ամորտիզացիա	37,597	34,047
Ֆինանսական եկամուտ	(6,556)	(8,729)
Ֆինանսական ծախսեր	12,662	17,726
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	8,678	30,755
<b>Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը</b>	<b>(51,616)</b>	<b>(52,880)</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (ավելացում)/ նվազում	(25,509)	501
Պաշարների նվազում	62	1,118
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի ավելացում/ (նվազում)	47,203	(10,639)
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>(29,860)</b>	<b>(61,900)</b>
Վճարված շահութահարկ	-	(196)
<b>Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>(29,860)</b>	<b>(62,096)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(712)	(1,850)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(10,999)	(4,565)
Ստացված տոկոսային եկամուտ	5,834	8,729
<b>Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>(5,877)</b>	<b>2,314</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	230,000
<b>Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>	<b>-</b>	<b>230,000</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>	<b>(35,737)</b>	<b>170,218</b>
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(5,051)	3,784
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	383,795	209,793
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում</b>	<b>343,007</b>	<b>383,795</b>

## Մեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

## 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Բաժնետիրակ ան կապիտալ</i>	<i>Լրացուցիչ կապիտալ</i>	<i>Կուտակված վնաս</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	383,000	49,534	(176,014)	256,520
Կանոնադրական կապիտալի ավելացում	230,000	-	-	230,000
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>613,000</b>	<b>49,534</b>	<b>(290,576)</b>	<b>371,958</b>
2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	613,000	49,534	(290,576)	371,958
	-	-	(88,878)	(88,878)
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>613,000</b>	<b>49,534</b>	<b>(379,454)</b>	<b>283,080</b>

## Ծանոթագրություն 1

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Ուղեկցող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք բաղկացած են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունից, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունից և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունից, քաղված են Ընկերության՝ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած և 2016թ. հունիսի 20-ին ստորագրված ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ուղեկցող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: